

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ

Մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը Վրաստանի և հարևան երկրների շահերի խաչմերուկում

ԿԱՐՈ ԳԱԼՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

Հողվածում ներկայացվում են մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի բազմակողմանի ուսումնասիրության արդյունքները: Վերլուծվում է հիմնախնդրի առաջացման, մեսխեթցի թուրքերի շարժման և կազմակերպությունների դիրքորոշումներն ու դրանց գործունեության արդյունավետությունը: Ինչի արդյունքում երևում է խնդրի բազմաշերտ լինելը, որի բաղադրիչներն են նրանց ինքնությունը պազրելու և այն պահպանելու, ուժացման, հայրենադարձության և ներկա բնակության վայրերում հասարակությանն ինտեգրվելու, սոցիալ-տնտեսական և իրավական բնույթի խնդիրները լուծելու հարցերը: Վրաստանի քաղաքականության և այս հարցով հետաքրքրված հարևան երկրների շահերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հիմնախնդիրը որոշակի վտանգ է պարունակում Հայաստանի համար, որը շրջանցելու նպատակով ներկայացվում են քննարկման առարկայի շրջանակներում Վրաստանի հետ համագործակցության եզրերը:

Բանալի բառեր

Մեսխեթցի թուրքեր, կազմակերպություններ, տարածաշրջան, Սամցխե-Ջավախեթի, Վրաստան, Թուրքիա, Ադրբեջան, Հայաստան:

Ներածություն

Մեսխեթցի թուրքերը ձևավորվել են Վրաստանի հարավում գտնվող պատմական Մեսխեթի¹ տարածքում: Մեսխեթցի թուրքերի մեծ մասը

¹ Մեսխեթի անվանումը կիրառվում է երկու նշանակությամբ: Նեղ իմաստով այն ընդգրկում է մեսխեթի բնակության վայրերը՝ պատմական Վերին Քարթլիի տարածքը՝ ժամանակակից Սամցխեն և Թուրքիայի կազմում գտնվող հարակից տարածքները: Լայն իմաստով Մեսխեթի ասելով հասկանում են միջնադարյան Վրաստանի պետական կազմավորումներից մեկի՝ Սամցխե Սաաթաբագոյի (Սամցխեի

սունի մահմեդականներ են և խոսում են թուրքերի արևելաանատոլական բարբառով: Նրանց ծագման վերաբերյալ կա երկու հիմնական տեսություն, որոնցից մեկը պայմանականորեն կարելի է անվանել «թուրքական», իսկ մյուսը «վրացական»: Թուրքական ծագման կողմնակիցները հիմնականում ազգությամբ թուրք և ադրբեջանցի հետազոտողներ են², իսկ վրացական ծագման վարկածն առավել տարածված է վրացի հետազոտողների շրջանում³: Այս էթնոկրոնական խումբը հայտնի է բազմաթիվ անվանումներով՝ մեսխեթցի թուրքեր, թուրք-մեսխեթցիներ, մեսխեր, մեսխեթցիներ, Ահրսկա (Ախալցխիսեի) թուրքեր: Այդ անվանումներն ունեն նաև քաղաքական ենթատեքստ: Այսպես, վրացական կողմը նախընտրում է անվանել «մեսխեր» կամ «մեսխեթցիներ»՝ համարելով նրանց մահմեդականացած և թրքացված վրացիներ: Մեսխեթցի թուրքերի մեծ մասը, ինչպես նաև թուրք և ադրբեջանցի հետազոտողները նախընտրում են «թուրքեր» կամ «Ահրսկա թուրքեր» (Ahıska Türkləri) եզրույթը, որը ծագում է նրանց նախկին բնակության վայրի՝ Ախալցխիսեի փաշայության անվանումից: Գիտական գրականությունում առավել հաճախ հանդիպում է «մեսխեթցի թուրքեր» եզրույթը, որը նաև փոխզիջումային տարբերակ է:⁴ Հարկ է նշել, որ այս եզրույթն ի հայտ է եկել 1970-ական թվականներին և տարածում գտել միայն 1980-ականներին: Մեսխեթցի թուրքերից շատերը չեն կիրառում այդ անվանումը, ինչի մասին վկայում է այն, որ 2010թ. ՌԴ-ում անցկացված

աթաբեկության) ամբողջ տարածքը, որի մեջ մտնում էին նաև պատմական Հայաստանի հյուսիսային որոշ շրջաններ:

² **Zeyrek Y.**, Ahıska bölgesi ve Ahıska Türkləri, Ankara, 2001, s. 6-40; **Юнусов А.**, Ахыскинские (месхетинские) турки: дважды депортированный народ - https://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_20_junusov.shtml (09.01.2019).

³ **Լոմճաճե Մ.**, სამცხე-ჯავახეთი (XVIII საუკუნის შუაწლებიდან XIX საუკუნის შუაწლებამდე), «მეცნიერება», თბილისი, 1975; **Beridze M., Kobaidze M.**, An attempt to Create an Ethnic Group: Identity Change Dynamics of Muslimized Meskhetians, “Language, History and Cultural Identities in the Caucasus” conference, Malmö University, 2005., pp. 53-67; **Мамулия Г.**, Концепция государственной политики Грузии в отношении депортированных и репатриированных в Грузию месхов. История и современность - https://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_19_mamulija.shtml (09.01.2019).

⁴ **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, Meskhetians Homeward Bound..., ECMI - Caucasus, Georgia, 2001, pp. 37-38.

մարդահամարի տվյալներով, այնտեղ բնակվող մոտ 100000 մեսիսեթցի թուրքերից միայն 4825 մարդ է գրանցվել որպես «մեսիսեթցի թուրք», մինչդեռ մեծ մասը գրանցվել են որպես «թուրք»,⁵ որը վկայում է նրանց մեծ մասի թուրքական ինքնություն ունենալու մասին:

Ներկայումս մեսիսեթցի թուրքերը բնակվում են Վրաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի և ԱՄՆ տարածքներում: Նրանց ընդհանուր թիվը կազմում է 425-450 հազար մարդ:⁶

Մեսիսեթցի թուրքերն իրենց բուն հայրենիքն են համարում Վրաստանի հարավում գտնվող Սամցխե-Ջավախեթի վարչական տարածքը, ուր ցանկանում են վերադառնալ: Այդ հարցում նրանց ձգտումները առնչվում են Վրաստանի և նրա հարևան երկրների շահերի հետ, որի հետևանքով մեսիսեթցի թուրքերի հիմնախնդիրը ստանում է նաև ընդգծված աշխարհաքաղաքական ենթատեքստ: Հիմնախնդիրը մինչ այժմ մնում է չլուծված և տարածաշրջանում կամ մեսիսեթցի թուրքերի կոմպակտ բնակչություն ունեցող երկրներում ուժերի դասավորվածության կամ քաղաքական իրավիճակի փոփոխությունները, կարող են հիմնախնդրի դարձյալ սրման պատճառ դառնալ: Քանի որ Սամցխեթ-Ջավախեթին Հայաստանին սահմանակից տարածք է ունի պատմական հայկական ստվար բնակչություն, ուստի հայ ժողովրդի անվտանգության տեսանկյունից կարևոր է համարում հիմնախնդրի բազմակողմանի ուսումնասիրությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել մեսիսեթցի թուրքերի հիմնախնդրի ձևավորումը, դրա լուծման փորձերը, Վրաստանի քաղաքականությունը մեսիսեթցի թուրքերի հայրենադարձության գործընթացի նկատմամբ և դրանում ներգրավված միջազգային դերակատարների շահերը:

⁵ **Ахметьева В., Карастелев В., Юдина Н.,** Жизнь без прав. Положение ахыска-турок на юге России в 2015 году, доклад центра «Сова» и Московской Хельсинкской группы, Москва, 2015, с. 6.

⁶ **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.,** նշվ. աշխ., p. 55.

Մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի առաջացման ակունքները

Մեսխեթցի թուրքերը մինչև 1944թ. բնակվում էին Ադիգենի, Ախալցխիսեի, Ասպինձայի, Ախալքալաքի և Բոզդանովկայի շրջանների 200-ից ավելի գյուղերում:⁷ Նույն թվականի նոյեմբերի 15-18-ն ընկած ժամանակահատվածում վերոնշյալ շրջանների մեսխեթցի թուրքերը և քրդերը բռնի կերպով տեղահանվեցին իրենց բնակության վայրերից և տեղափոխվեցին Ղազախստան, Ուզբեկստան և Ղրղզստան: Նոյեմբերի 25-26-ին այնտեղ արտաքսվեցին նաև Աջարիայում բնակվող մահմեդական համալսականներն ու թուրքերը: Պաշտոնական աղբյուրների համաձայն բռնագաղթվածների ընդհանուր թիվը կազմել է 91095 մարդ:⁸ Միջինասիական խորհրդային հանրապետություններ հասած և այդտեղ տեղաբաշխվածների թիվն, ըստ պաշտոնական աղբյուրների, եղել է 92307 մարդ:⁹ Ադրբեջանցի և թուրք հետազոտ-տողները տեղահանվածների ավելի մեծ թիվ են նշում,¹⁰ իսկ ներառյալ բնակում ծառայողներին՝ մինչև 145000 մարդ:¹¹ Սակայն այդ թվերը հակասում են 1897, 1926 և 1939 թվականների մարդահամարների տվյալներին:

1897 թվականի Ռուսական կայսրության առաջին համընդհանուր մարդահամարի տվյալներով վերոնշյալ 5 շրջաններն ամբողջու-

⁷ **Панеш Э.Х., Ермолов Л.Б.**, Турки-месхетинцы (историко-этнографический анализ проблемы), *Советская этнография*, 1990, 1, с. 16; **Swerdlov S.**, Reflections on Transitional Minorities and Human Rights Meskhetians and Hemshins in Georgia and Krasnodar, *Anthropology, Minorities, Multiculturalism*, 2004, 5, p. 6; **Kurt S.**, Ahıska'nın Türkiye İçin Jeopolitik Önemi, *Karadeniz Araştırmaları*, 2018, 58, s. 203; **Ersöz S.**, Ahıska'da iki büyük ağız grubu: terekeme ve yerli türk ağız, *Uluslararası Türkçe Edebiyat Kültür Eğitim Dergisi*, 2014, 2, s. 105.

⁸ Докладная записка наркома внутренних дел Л.П. Берии И.В. Сталину, В.М. Молотову, Г.М. Маленкову о проведении операции по переселению турок, курдов и хемшинов из пограничных районов Грузинской ССР, Архив Александра Н. Яковлева - <http://www.alexanderyakovlev.org/fond/issues-doc/1022541> (07.01.2019); **Бурай Н.Ф.**, Турки из Месхетии: долгий путь к реабилитации (1944–1994), «РОСС», Москва, 1994, с. 76-77.

⁹ **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, նշվ. աշխ., p. 14.

¹⁰ **Aydingün A., Harding C.B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S.**, Meskhetian Turks An Introduction to their History, Culture and Resettlement Experiences, *Culture Profile*, 2006, 20, p. 6.

¹¹ **Гаджиев А.**, Ахалцихские турки: история, этнография, фольклор, *ИРС Наследие*, 2007, 2 (26), с. 10.

թյամբ ընդգրկող Ախալցխիսիևի և Ախալքալաքի գավառներում «թուրքեր» և «թաթարներ» անվան տակ գրանցված էին համապատասխանաբար 24433 և 19299, ընդամենը՝ 43732 մարդ:¹² 1926 թվականի համախորհրդային մարդահամարի տվյալներով նրանք նշված են «թուրքեր» հավաքական անվան տակ, որոնց ընդհանուր թիվը կազմում էր 56110 մարդ:¹³ 1939թ. համախորհրդային մարդահամարի տվյալների համաձայն Ադիգենի, Ախալցխիսիևի, Ասպինձայի, Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջաններում բնակվում էր 87971 «ադրբեջանցի»¹⁴, որը մահմեդականացած տեղի բնակչության (վրացիների և, մասամբ, հայերի), օսմանյան տիրապետության շրջանում կայսրության այլ շրջաններից եկած թուրքերի, ինչպես նաև թարաքամաների և այլ փոքրաթիվ թյուրքախոս մահմեդական խմբերի հավաքական անվանումն էր:¹⁵ Աջարիայում բնակվող թուրքերի թիվը 2201 էր:¹⁶ Այսպիսով, շուրջ 30 տարվա ընթացքում նրանց բնական աճի միջին ցուցանիշը չի գերազանցել 2500-ը: Ուստի, մինչև հասուն տարիքի տղամարդկանց գորակոչվելը, 1941 թվականին նրանց թիվը պետք է լիներ մոտ 92000: 1939թ. տվյալներով քրդերի թիվը կազմում էր 3858:¹⁷ Տեղահանության են ենթարկվել 120 համշենահայերի ընտանքիներ, այսինքն՝ մոտ 1000 մարդ:¹⁸ Բանակում ծառայող և պատերազմի ավարտից հետո Միջին Ասիա տեղահանված մեխիեթցի թուրքերի

¹² Первая всеобщая перепись населения Российской империи 1897 года, т. 69, 1905, с. 90-93.

¹³ Всесоюзная перепись населения 1926 г., т. 14, Москва, 1929, с. 84-91.

¹⁴ Всесоюзная перепись населения 1939 года. Национальный состав населения районов, городов и крупных сел союзных республик СССР - http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_39_ra.php?reg=777 (05.01.2019).

¹⁵ Հարկ է նշել, որ տարբեր տարիներին «թուրքեր», «թաթարներ», «թյուրքեր» և «ադրբեջանցիներ» անվան տակ գրանցված մարդկանց ճնշող մեծամասնությունը բնակվում էր Ադիգենի, Ախալցխիսիևի և Ասպինձայի շրջաններում (նախկին Ախալցխիսիևի գավառում), իսկ Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջաններում (նախկին Ախալքալաքի գավառում) 1897-1939թթ. մարդահամարների տվյալներով նրանց թիվը տատանվում էր ընդամենը 5-7 հազարի սահմաններում:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Swerdlov S., նշվ. աշխ., p. 9; **Մոզեզադե Յ.**, *Մեքսիկոյի քրոմոլեյմիս յնալոօօի, „Յալմոսանօ“, տծիլօսօ, 2010, թՅ. 77.*

թիվը մոտ 10000 էր:¹⁹ Այս ամենից հետևում է, որ պաշտոնական տվյալներն այնքան էլ հեռու չեն իրականությունից և բանակում ծառայողների հետ տեղահանված բնակչությունը կազմում էր մոտ 100 հազար մարդ:

Որպես տեղահանության պաշտոնական պատճառ նշվում էր այն, որ տեղի բնակչության զգալի մասը, ունենալով Թուրքիայի սահմանամերձ շրջանների բնակիչների հետ ազգակցական կապեր, ուներ Թուրքիա արտագաղթելու ցանկություն, զբաղվում էր մաքսանենգությամբ և լրտեսությամբ՝ ի օգուտ թուրքական հետախուզության:²⁰ Սահմանամերձ շրջանների մահմեդական բնակչության տեղահանումը բացատրվում էր նաև Թուրքիայի հնարավոր հարձակման վտանգով:²¹ Հարկ է նշել, որ մեսխեթցի թուրքերի, քրդերի ու մահմեդական համալսարանների տեղահանությունը տեղի է ունեցել, երբ արդեն պատերազմի ընթացքը վաղուց բեկվել էր, դաշնակիցները մոտ էին հաղթանակին, իսկ Թուրքիայի հարձակման վտանգն արդեն անցել էր: Ելնելով վերոգրյալից, որոշ հեղինակներ բռնագաղթի պատճառ են համարում Թուրքիայի վրա ԽՍՀՄ-ի հարձակման նախապատրաստումը և թույլ զարգացած միջինասիական շրջաններում գյուղատնտեսությանը զարկ տալու ծրագրերը:²²

Լքված գյուղերի մեծ մասում իշխանությունները բնակեցրեցին երկրի այլ շրջաններից եկած 25-30 հազար վրացիների, որոնց մի մասը, անբարենպաստ պայմաններից ելնելով, նախընտրեց վերադառնալ նախկին բնակության վայրերը:²³

¹⁹ **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, նշվ. աշխ., p. 12.

²⁰ Докладная записка наркома внутренних дел Л.П. Берии И.В. Сталину, В.М. Молотову, Г.М. Маленкову о проведении операции по переселению турок, курдов и хемшинов из пограничных районов Грузинской ССР, Архив Александра Н. Яковлева - <http://www.alexanderyakovlev.org/fond/issues-doc/1022541> (07.01.2019).

²¹ **Израелян В.**, Дипломатия в годы войны (1941–1945), Москва, 1985, с. 137; История Великой Отечественной войны Советского Союза 1941– 1945гг., т. II, Москва, 1961, с. 193.

²² **Յուզբաձեյ Յ.**, նշվ. աշխ., թ. 76-77.

²³ **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, նշվ. աշխ., pp. 12-13;

Modebadze V., Historical Background of Meskhetian Turks' Problem and Major Obstacles to the Repatriation Process, *IBSU Scientific Journal*, 2009, 3, p. 115.

Բռնագաղթի հետևանքով սովից, ցրտից և հիվանդություններից մահացածների թվի մասին հակասական տեղեկություններ են հաղորդվում: Ադրբեջանցի և թուրք որոշ հետազոտողների նշած զոհերի թիվը՝ 30-50 հազար,²⁴ իրականությունից հեռու է և նման անհավանական թվերը ստացվում են տեղահանվածների թվի չափազանցեցումից: Ավելի իրատեսական են թվում 15-17 հազար զոհերի մասին տեղեկությունները:²⁵

Բռնագաղթածները «հատուկ վերաբնակների» կարգավիճակ ստացան, իրավունք չունեին քելու իրենց բնակության վայրերը և գտնվում էին վերահսկողության ներքո:²⁶ Տեղի բնակչությունը նրանց նկատմամբ հաճախ բացասական վերաբերմունք էր դրսևորում՝ համարելով «դավաճաններ»:²⁷

Միջին Ասիա արտաքսված փոքրաթիվ թուրքախոս ժողովուրդը, հայտնվելով մի միջավայրում, որտեղ մշակութային և լեզվական խոչընդոտներ գրեթե չկային, պետք է տարալուծվեր տեղի ժողովուրդների շրջանում, սակայն դա տեղի չունեցավ: Պատճառների թվին են դասվում «տեղացի-եկվոր» սոցիալ-հոգեբանական հակադրությունը, ինչպես նաև մարդաբանական տարբերությունները:²⁸

Ստալինի մահից հետո, 1956թ. բռնագաղթած ժողովուրդներից հանվեց «հատուկ վերաբնակների» կարգավիճակը և շատերին թույլ տրվեց վերադառնալ իրենց հայրենիք: Սակայն մեսխեթցի թուրքերին

²⁴ Zeyrek Y., նշվ. աշխ., s. 54; Гаджиев А., նշվ. աշխ., с. 10.

²⁵ Swerdlov S., նշվ. աշխ., p. 9; Юнусов А., նշվ. աշխ.; Թուրքաբանություն, նշվ. աշխ., թ. 78; Շաքարյան Ա., Մեսխեթցի թուրքեր. Աշխարհաքաղաքական գործոն տարածաշրջանում, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, «Ասողիկ», Երևան, 2006, էջ 74:

²⁶ Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., նշվ. աշխ., p. 14; Թուրքաբանություն, նշվ. աշխ., թ. 78.

²⁷ Թուրքաբանություն, նշվ. աշխ., թ. 78-79; Swerdlov S., Understanding Post-Soviet Ethnic Discrimination and the Effective Use of U.S. Refugee Resettlement: The Case of the Meskhetian Turks of Krasnodar Krai, *California Law Review*, 2006, 6 (94), p. 1835.

²⁸ Арис Казинян: Грузия и американо-турецкий проект по возвращению турок-месхетинцев: история и реальность - <https://regnum.ru/news/671851.html> (10.01.2019).

Վրաստան վերադառնալ թույլ չտվեցին:²⁹ Մի շարք հեղինակների կարծիքով պատճառներից մեկը 1952թ. Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ին անդամակցությունն էր, ինչի հետևանքով վերջինիս հետ սահմանակից շրջանները (այդ թվում նաև Ախալցխիսի և հարակից շրջանները) ռազմավարական նշանակություն ստացան:³⁰

1968թ. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի որոշմամբ 1940-ական թվականներին Վրաստանի հարավից և Աջարիայից տեղահանված մեսխեթցի թուրքերին, քրդերին, «հեմշիններին» (մահմեդական համալստանային) և ադրբեջանցիներին իրավունք տրվեց բնակվել ամբողջ ԽՍՀՄ տարածքում:³¹ Սակայն որոշման երկրորդ կետում նշվում էր, որ նշված քաղաքացիներն արդեն «հաստատվել» են միջինասիական հանրապետություններում, որոնց ղեկավարություններին խորհուրդ էր տրվում նրանց համար ստեղծել համապատասխան պայմաններ: Փաստորեն, այդ կետը հայրենադարձության միայն ձևական հնարավորություն էր տալիս: Խորհրդային Միությունում կիրառվող մշտական բնակության վայրով գրանցման համակարգը նույնպես խնդիրներ էր առաջացնում: Բացի այդ, Վրաստանի ԽՍՀ իշխանությունները մեսխեթցի թուրքերի վերադարձն անհնար էին համարում, քանի որ այդ տարածքներն արդեն բնակեցվել էին քրիստոնյա վրացիներով, իսկ մահմեդականների վերադարձը կարող էր ապակայունացնել իրավիճակը:³² Մեսխեթցի թուրքերի վերադարձը խոչնդոտում էր նաև այն, որ ոչ պաշտոնապես Վրաստանի ԽՍՀ իշխանությունները պահանջում էին վերադարձողներից ընդունել

²⁹ Панеш Э.Х., Ермолов Л.Б., и 2 ւ . աշխ., с. 16; Aydingün A., Harding C.B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S., նշվ. աշխ., p. 7; Zeyrek Y., նշվ. աշխ., s. 59.

³⁰ Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., նշվ. աշխ., p. 18; Pentikäinen O., Trier T., Between Integration and Resettlement: The Meskhetian Turks, ECMI Working Paper # 21, Flensburg, 2004, pp. 11-12; Swerdlow S., Understanding Post-Soviet Ethnic Discrimination..., p. 1836, Aydingün A., Harding C.B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S., նշվ. աշխ., p. 7.

³¹ Усманов А.О., К вопросу о конституционно-правовой реабилитации месхетинских турок: политико-правовой аспект, *Гуманитарные и юридические исследования*, 2017, 3, с. 160; Бугай Н.Ф., Проблемы возвращения «плановых переселенцев» в районы прежнего проживания до 1940-ых гг., *Вестник Калмыцкого института гуманитарных исследований РАН*, 2014, 4, с. 50.

³² Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., նշվ. աշխ., p. 18.

իրենց վրացական ծագումն ու փոխել ազգանունները վրացական ազգանունների, ինչը ոչ բոլոր մեսիսթեցի թուրքերն էին ընդունում:³³

1950-1960-ական թվականներին մեսիսթեցի թուրքերի փոքր խմբեր տեղափոխվեցին Ադրբեջանի ԽՍՀ և Հյուսիսային Կովկաս: Այդ ընթացքում Ադրբեջան տեղափոխվեց մոտ 25-30 հազար մեսիսթեցի թուրք, որոնց փաստաթղթերում գրված էր «ադրբեջանցի»:³⁴ Նույն ժամանակահատվածում մեսիսթեցի թուրքերի շրջանում սկիզբ է առնում նաև Վրաստան վերադառնալու գաղափարի շուրջ ձևավորված շարժումը:³⁵ 1960-70-ական թվականներին մեսիսթեցի թուրքերի փոքր խմբեր հաստատվեցին արևմտյան Վրաստանում, սակայն նրանց մի մասը հետագայում լքեց երկիրը՝ խորական վերաբերմունքի պատճառով:³⁶ Հետաքրքրական է, որ Վրաստանում մեսիսթեցի թուրքերը կարողացան ապաստան գտնել նաև Աբխազիայի ինքնավար հանրապետության տարածքում: 1969 թվականին շուրջ 250 ընտանիքներ հաստատվեցին Գալիի շրջանում, մասնավորապես, Աչիգվարա բնակավայրում:³⁷

Մինչ 1989թ. մեսիսթեցի թուրքերի հիմնախնդիրը, որպես այդպիսին, խորհրդային իշխանությունները չէին ճանաչում: Իրավիճակը փոխվեց 1989 թվականի մայիս-հունիս ամիսներին Ուզբեկստանի Ֆերգանայի շրջանում տեղի ունեցած ջարդերի արդյունքում, որոնց թիրախը մեսիսթեցի թուրքերն էին: Մեսիսթեցի թուրքերին թիրախավորելու պատճառները մինչ այժմ մասնագիտական շրջանակներում միանշանակ գնահատական չեն ստացել: Որոշ հետազոտողներ դրանք դիտարկում են ուզբեկների և տաջիկների միջև լարված հարաբերությունների համատեքստում:³⁸ Մեկ այլ տեսակետի

³³ Панеш Э.Х., Ермолов Л.Б., նշվ. աշխ., с. 19.

³⁴ Modebadze V., նշվ. աշխ., p. 116; Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., նշվ. աշխ., p. 19.

³⁵ Շաքարյան Ա., նշվ. աշխ., էջ 74:

³⁶ Оганесян А., Политика Турции и Грузии в отношении проблем турок-месхетинцев, Чанթեղ գիտական հոդվածների ժողովածու, 2001, 3, էջ 171:

³⁷ Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., նշվ. աշխ., p. 26.

³⁸ Панеш Э.Х., Ермолов Л.Б., նշվ. աշխ., с. 17-18; Арис Казинян: Грузия и американо-турецкий проект по возвращению турок-месхетинцев: история и реальность - <https://regnum.ru/news/671851.html> (10.01.2019).

համաձայն, այդ դեպքերը կազմակերպել էին խորհրդային իշխանությունները մի շարք խնդիրներ լուծելու՝ Ռուսաստանի կենտրոնական շրջանների տնտեսության զարգացումը խթանելու, ուզբեկ ազգայնամուլների ուշադրությունը սլավոններից շեղելու, Հարավային Կովկասում անջատողական շարժումները կանխելու համար:³⁹ Անկախ ջարդերի քաղաքական նպատակներից, դրան նպաստող հանգամանքներ հանդիսացան մեսխեթցի թուրքերի իրավական պաշտպանվածության ցածր մակարդակը, նրանց համայնքների «փակ» լինելը՝ տեղացիներից մեկուսացվածությունը, խորհրդային իշխանությունների անտարբեր վերաբերմունքը հիմնախնդրին: Ֆերգանայի ջարդերի արդյունքում մոտ 100 մարդ զոհվեց, 1000-ից ավելի մարդ ստացավ տարբեր աստիճանի վնասվածքներ, իսկ Ուզբեկստանում բնակվող մեսխեթցի թուրքերի մեծ մասը ստիպված եղավ լքել երկիրը:⁴⁰

1989թ. խորհրդային իշխանությունները Ֆերգանայից Ռուսաստանի եվրոպական հատվածի կենտրոնական շրջաններ տարհանեցին շուրջ 17 հազ. մեսխեթցի թուրքերի:⁴¹ Ուզբեկստանից հեռացած 60-70 հազար մեսխեթցի թուրքերը ապաստանեցին Ղազախստանում, Ռուսաստանում (գերագանցապես՝ Հյուսիսային Կովկասում), Ադրբեջանում, Դրոզդստանում և Ուկրաինայում:⁴²

Ֆերգանայի դեպքերից հետո մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը հայտնվեց ԽՍՀՄ իշխանությունների ուշադրության կենտրոնում և ընդունվեցին մի շարք որոշումներ, ինչպես, օրինակ, 1989թ. նոյեմբերի 14-ի «Բռնի տեղահանման ենթարկված ժողովուրդների դեմ ճնշումներն անօրինական և հանցավոր ճանաչելու և նրանց

³⁹ **Modebadze V.**, ս 2 վ. աշխ., p. 118; **Seferov R., Akış A.**, *Sovyet Döneminden Günümüze Ahıska Türklerinin Yaşadıkları Coğrafyaya Göçlerle Birlikte Genel Bir Bakış, Türkiyat Araştırmaları Dergisi*, 2008, 24, s. 400-401; **Гаджиев А.**, նշվ. աշխ., c. 11.

⁴⁰ **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, նշվ. աշխ., p. 28; **Յուզբեթյ Յ.**, նշվ. աշխ., թ. 83; **Zeyrek Y.**, նշվ. աշխ., s. 71.

⁴¹ **Modebadze V.**, նշվ. աշխ., p. 118; **Aydingün A., Harding C.B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S.**, նշվ. աշխ., p. 8.

⁴² **Pentikäinen O., Trier T.**, նշվ. աշխ., pp. 11-12; **Kurt S.**, նշվ. աշխ., s. 205; **Յուզբեթյ Յ.**, նշվ. աշխ., թ. 84-85; **Ахметьева В., Карастелев В., Юдина Н.**, նշվ. աշխ., c. 5-6.

իրավունքներն ապահովելու մասին» ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի հայտարարությունը, 1991թ. մարտի 7-ի «1989թ. նոյեմբերի 14-ի Հայտարարության հետ կապված օրենսդրական ակտերի չեղարկման մասին» ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի որոշումը, ինչպես նաև 1991թ. հունիսի 6-ի «Ճնշումների և բռնի տեղահանման ենթարկված խորհրդային ժողովուրդների նկատմամբ նախկին ԽՍՀՄ Պաշտպանության Կոմիտեի և ԽՍՀՄ Կառավարության որոշումների չեղարկման մասին» ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի որոշումը և այլն:⁴³ Այդ փաստաթղթերը մեսխեթցի թուրքերի հայրենադարձության հարցում գործնական նշանակություն չունեցան, քանի որ կարճ ժամանակ անց փլուզվեց Խորհրդային Միությունը: Փաստորեն, այդ օրենսդրական ակտերն ընդունելով, ԽՍՀՄ իշխանությունները ճանաչեցին նաև մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի գոյությունը: Եթե նախկինում այն անտեսվում էր, ապա այժմ հիմնախնդիրը սկսեցին քննարկել տարբեր հարթակներում, փնտրել լուծման տարբերակներ:

Մեսխեթցի թուրքերի շարժումը, կազմակերպությունները և նրանց դիրքորոշումները

1950-60-ական թվականներին միջինասիական հանրապետություններ բռնագաղթած մեսխեթցի թուրքերի շրջանում սկսում է ձևավորվել հայրենիք վերադարձի գաղափարը: Սկզբնական շրջանում առաջանում են մի շարք ընդհատակյա կազմակերպություններ, որոնք սակայն, համընդհանուր ճանաչման չեն հասնում մեսխեթցի թուրքերի շրջանում:

1962թ. Տաշքենդի մարզի Բուկինյան շրջանում գաղտնի պայմաններում անցկացվեց մեսխեթցի թուրքերի առաջին հիմնադիր համագումարը, որտեղ քննարկվեց հայրենիք վերադարձի ազգային շարժման հարցը: Շարժումն ավելի կազմակերպված դարձնելու նպատակով ընտրվեց հայրենիք վերադարձի «Ժամանակավոր կազմակերպական կոմիտե»:⁴⁴ Այս համագումարից սկսած մեսխեթցի թուրքերի հայրենադարձության շարժումը կարելի է համարել

⁴³ Усманов А.О., նշվ. աշխ., с. 160.

⁴⁴ Панеш Э.Х., Ермолов Л.Б., նշվ. աշխ., с. 18-19.

ձևավորված: Մինչև 1989թ. տեղի է ունեցել 10 համագումար: Կոմիտեն բազմաթիվ դիմումներ է հասցեագրել պաշտոնական Մոսկվային, ինչպես նաև ՎԽՄՀ իշխանություններին: Մինչև 1989թ. հիմնախնդրի լուծման հարցում այդպես էլ որևէ էական փոփոխություն տեղի չունեցավ:

Վրացի հեղինակների պնդմամբ, մեսխեթցի թուրքերի ղեկավարներն, իշխանության ճնշումների տակ գտնվելով, 1960-80-ական թվականներին իրենց վրացական ծագման տեսությունից անցում կատարեցին թուրքականին:⁴⁵ Թուրքական ծագման կողմնակից հեղինակները պնդում են, որ մեսխեթցի թուրքերի զգալի մասը միայն հայրենիք վերադառնալու իրավունք ստանալու հույսով էր ընդունում վրացական ծագման վարկածը:⁴⁶ Անկախ պատճառներից, կարելի է եզրակացնել, որ մեսխեթցի թուրքերի շարժման ղեկավարները, ինչպես նաև ժողովրդի մի մասը հայրենադարձության հարցն ավելի բարձր էին դասում, քան ազգային ինքնության հարցը, որը բավականին հեշտությամբ կարող էին փոխել՝ ելնելով ստեղծված իրավիճակից: Այդ ամենի հետևանքը եղավ այն, որ մեսխեթցի թուրքերի շրջանում ձևավորվեց երկու խմբակցություն: Մի մասն ընդունում էր իրենց վրացական ծագման վարկածը և համաձայն էր վերադառնալ Վրաստանի ցանկացած շրջան, մյուս մասն էլ ուներ թուրքական ինքնություն և որպես հայրենիք դիտարկում էր ոչ թե ամբողջ Վրաստանն, այլ հենց նախկին Ախալցխիսի փաշայությունը: Մինչդեռ թուրքական ինքնություն ունեցողների մի մասը, որպես հայրենիք, ընդունում էր նաև Թուրքիան:⁴⁷

1988թ. հուլիսի 28-ին Կաբարդինո-Բալկարիայի ինքնավար հանրապետության Փսիկոդ շրջանում տեղի ունեցավ մեսխեթցի թուրքերի իններորդ համագումարը, որն առանձնացավ երկու հակադիր խմբակցությունների միջև սուր պայքարով: Երկար բանավեճերից հետո պատվիրակների մեծ մասն աջակցեց «թուրքական ծագման» կողմնակիցներին և վրացական ուղղության ներկայացուցիչների դիրքորոշումը գնահատվեց որպես «ազգային շահերի

⁴⁵ *Յուրդյեմյ Յ.*, նշվ. աշխ., թ. 88-89.

⁴⁶ *Zeyrek Y.*, նշվ. աշխ., s. 58; *Панеш Э.Х., Ермолов Л.Б.*, նշվ. աշխ., с. 19.

⁴⁷ *Modebadze V.*, նշվ. աշխ., p. 120.

դավաճանություն»:⁴⁸ Արդյունքում համագումարը որոշեց հասնել հայրենադարձության՝ իրենց թուրքական ազգային ինքնությունն ընդունելու պայմանով: Համագումարից մի քանի ամիս անց տեղի ունեցան Ֆերգանայի դեպքերը:

Խորհրդային Միության կազմալուծումից հետո մեսխեթցի թուրքերի հայրենադարձության շարժումը միասնական ընթացք չունեցավ: Ստեղծվեցին մի շարք կազմակերպություններ, որոնց նպատակները թեև համընկնում են, սակայն մի շարք հարցերում առկա են նաև տարաձայնություններ:

1990թ. հիմնվեց⁴⁹ մեսխեթցի թուրքերի «Վաթան» միջազգային հասարակական միավորումը: 1991թ. այն պաշտոնապես գրանցվեց Ռուսաստանում: Գլխավոր գրասենյակը գտնվում է Մոսկվայում, ունի նաև գրասենյակներ Կրասնոդարում, ՌԴ մի քանի այլ քաղաքներում և Ադրբեջանում: «Վաթան»-ը համարվում է մեսխեթցի թուրքերի առավել ազդեցիկ կազմակերպություններից մեկը, որի ղեկավարության կարծիքով՝ ներկայացնում է մեսխեթցի թուրքերի մեծ մասի շահերը՝ թեև, հարկ է նշել, որ որոշ համայնքներում այս կազմակերպության մասին նույնիսկ տեղյակ չեն:⁵⁰ Կազմակերպության ներկայացուցիչները մեսխեթցի թուրքերին էթնիկ թուրքեր են համարում և ունեն երկու գլխավոր նպատակ՝ անօրինական ճանաչել 1944 թվականի արտաքսումն ու թույլ տալ մեսխեթցի թուրքերին առանց նախապայմանների վերադառնալ իրենց հայրենիք: Որպես հայրենիք նրանք դիտարկում են միայն նախկին Ախալցխեի փաշայության տարածքը, այլ ոչ թե ամբողջ Վրաստանը:⁵¹ «Վաթան»-ը նաև Վրաստանի իշխանություններից պահանջում է հայրենադարձությունից հետո մեսխեթցի թուրքերին տրամադրել մշակութային ինքնավարություն, այդ թվում՝ իրենց մայրենի լեզվով (թուրքերեն) կրթության իրավունք:⁵² Մեսխեթցի թուրքերի բնակության վայրերում

⁴⁸ **Панеш Э.Х., Ермолов Л.Б.**, նշվ. աշխ., с. 19-20.

⁴⁹ «Վաթան» (vatan) բառը թուրքերեն նշանակում է «հայրենիք», առաջացել է միևնույն նշանակությունն ունեցող արաբերեն وطن (ուատան) բառից:

⁵⁰ **Pentikäinen O., Trier T.**, նշվ. աշխ., p. 27; **Շաքարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 80:

⁵¹ **Modebadze V.**, նշվ. աշխ., pp. 120-121.

⁵² **Յուզբաժժյ Յ.**, նշվ. աշխ., ճջ. 90-91; **Pentikäinen O., Trier T.**, նշվ. աշխ., p. 28.

առկա սոցիալ-տնտեսական դժվարությունները, հասարակությունում ինտեգրվելու հարցը և այլ նմանատիպ խնդիրներ հաճախ անտեսվում են:⁵³ Այսպիսի կարևոր հարցերում կազմակերպության մոտեցումը կարելի է բացատրել ինչպես գաղափարական հիմքերով (Ռուսաստանում և այլ երկրներում մեսիսթեջի թուրքերի բնակությունը ժամանակավոր համարելով ու խնդրի միակ լուծումը տեսնելով հայրենադարձության մեջ),⁵⁴ այնպես էլ կազմակերպության ֆինանսական միջոցների սակավությամբ,⁵⁵ ինչը բավական բարդացնում է սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրների լուծումը: Հետևաբար հենց այդ խնդիրները լուծելու անկարողությունն է կազմակերպության նպատակների և դիրքորոշումների քաղաքական ուղղվածության պատճառը:

«Վաթան» կազմակերպության գործունեության արդյունքում պարբերաբար Ռուսաստանում տեղի են ունենում հավաքներ, որոնց ժամանակ մեսիսթեջի թուրքերը Վրաստանի կառավարությունից պահանջում են կիրառել հայրենադարձության մասին վրացական օրենքը:⁵⁶

1992թ. Կարադիին-Բալկարիայում հիմնվեց 1944 թվականին Վրաստանից արքորված վրացիների և նրանց սերունդների «Խսնա» կազմակերպությունը:⁵⁷ Նույն թվականին այն գրանցեց Վրաստանի արդարադատության նախարարությունը և կազմակերպությունը սերտ կապեր հաստատեց Վրաստանի իշխանությունների հետ:⁵⁸ «Խսնա»-ն ուներ վրացամետ դիրքորոշում: Նրա անդամներն իրենց համարում էին մահմեդականացված վրացիներ, որպես հայրենիք ընդունում էին ամբողջ Վրաստանի տարածքը և չէին պահանջում Վրաստանի

⁵³ Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., նշվ. աշխ., p. 32; Pentikäinen O., Trier T., նշվ. աշխ., p. 27;

⁵⁴ Бугай Н.Ф., Проблемы возвращения «плановых переселенцев»..., с. 50-51.

⁵⁵ Мавашев Ю., Игры вокруг турок-месхетинцев - <http://www.politrus.com/2015/11/14/ahiska-turks/> (14.01.2019).

⁵⁶ Турки-месхетинцы в годовщину депортации потребовали реабилитации своего народа - <https://www.kavkaz-uzel.eu/articles/312488/> (13.01.2019); Турки-месхетинцы на юге России отметили 72-ю годовщину депортации - <https://www.kavkaz-uzel.eu/articles/292637/> (13.01.2019).

⁵⁷ «Խսնա» (ԽՆՏ) վրացերենից թարգմանաբար նշանակում է «փրկություն»:

⁵⁸ Մուղդեծյ Յ., նշվ. աշխ., ՅՅ. 91-92.

իշխանություններից մշակութային ինքնավարություն:⁵⁹ Պետք է նշել, որ մեսխեթցի թուրքերի շրջանում այս կազմակերպությունն ավելի քիչ թվով կողմնակիցներ ուներ, քան «Վաթան»-ը: 1999 թվականին «Խսնա»-ն դադարեցրեց իր գործունեությունը և նրա փոխարեն ստեղծվեց «Վրացի հայրենադարձների միությունը»: Ի տարբերություն «Խսնա»-ի, «Վրացի հայրենադարձների միության» նպատակը ոչ թե մեսխեթցի թուրքերի հայրենադարձության հարցի լուծումն էր, այլ արդեն Վրաստանում բնակություն հաստատած մեսխեթցի թուրքերի ինտեգրումը և իրավունքների պաշտպանությունը:⁶⁰

Վրաստանում գործում են նաև մեսխեթցի թուրքերի մի շարք այլ կազմակերպություններ: Այդ կազմակերպություններն են ««Մեսխեթի» արտրված մեսխեթի երիտասարդական միությունը», ««Մեսխեթի» Լատիֆշահ Բարաթաշվիլիի հիմնադրամը», ««Գուրջիստան» Խալիլ Գոզալիշվիլիի անվան մահմեդական վրացիների միջազգային միությունը»: Բոլոր այս կազմակերպությունները մեսխեթցի թուրքերի ծագման հարցում վրացական վարկածի կողմնակիցներ են համարվում:

Ըստ էության, Վրաստանում գործող կազմակերպություններն ավելի սերտ կապ ունեն Վրաստանի իշխանությունների հետ, քան մեսխեթցի թուրքերի: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ այդ կազմակերպությունները ստեղծվել են ի հակակշիռ «Վաթան»-ի և ունեն խիստ ընդգծված քաղաքական դիրքորոշում: Թեև այդ կազմակերպությունները զբաղված են նաև Վրաստանում բնակվող մեսխեթցի թուրքերի առօրյա խնդիրների լուծմամբ ևս, հարկ է նշել, որ նրանց թիվը երկրում շատ քիչ է՝ մոտ 1700 մարդ:⁶¹

1994թ. ՌԴ Կրասնոդարի մարզի Կրիմսկի շրջանում հիմնվեց «Ումիտ»⁶² կազմակերպությունը: Կազմակերպությունն իր գործունեությունը ծավալեց միայն նշված շրջանում: «Ումիտ»-ի հիմնադիր Ակրամ

⁵⁹ Pentikäinen O., Trier T., նշվ. աշխ., p. 28.

⁶⁰ նույն տեղում:

⁶¹ Written statement on repatriation of Meskhetian Turks to Georgia, submitted by the NGO Federal Union of European Nationalities, https://www.ecoi.net/en/file/local/1236549/1930_1443084042_g1520228.pdf (12.01.2019);

⁶² «Ումիտ» (ümit) թուրքերենից թարգմանաբար նշանակում է «հույս»:

Բայրախտարովի կարծիքով մեսխեթցի թուրքերը էթնիկ թուրքեր են, և նա համարում էր, որ խնդիրը կլուծվի հայրենիք՝ Թուրքիա տեղափոխվելով:⁶³ 1999 թվականին կազմակերպությունը դադարեցրեց իր գործունեությունը:

Նմանատիպ դիրքորոշմամբ մեսխեթցի թուրքերի կազմակերպություններ հիմնվեցին նաև Ղրղզստանում՝ «Ղրղզստանում բնակվող թուրքերի միությունն» ու «ԱՊՀ երկրների ահրսկա թուրքերի միջազգային միությունը»: Տաշքենտում գործում է «Մեսխեթցի թուրքերի մշակութային կենտրոն»-ը:

Թուրքիայում գործում է մեսխեթցի թուրքերի շուրջ 20 կազմակերպություն, որոնցից 15-ը բավական ակտիվ գործունեություն են ծավալում: Կազմակերպությունների մեծ մասը գործում է Բուրսա քաղաքում, որտեղ բնակվում է Թուրքիայի քաղաքացի մեսխեթցի թուրքերի մեծ մասը: 2003թ. օգոստոսին այդ կազմակերպություններից ինը ձևավորեցին «Ահրսկա թուրքերի կազմակերպությունների միությունը»,⁶⁴ որն, ըստ էության, Թուրքիայում գործող մեսխեթցի թուրքերի կազմակերպությունների համախմբմանն ու ավելի համակարգված գործունեությանն ուղղված կարևոր քայլ է: Միությունը և Թուրքիայում գործող կազմակերպություններից շատերը համարում են, որ, բնակվելով Թուրքիայում, իրենք արդեն վերադարձել են իրենց հայրենիք: Նրանց գործունեության շրջանակներում է նաև նորեկ մեսխեթցի թուրքերին աջակցություն ցուցաբերելը և թուրքական հասարակությունում ինտեգրվելուն նպաստելը: Սակայն Թուրքիայում գործող կազմակերպություններից ոչ բոլորն ունեն նման դիրքորոշում: Ստամբուլում գործող «Ահրսկա թուրքերի կրթական, մշակութային և սոցիալական աջակցության կազմակերպություն»-ն իրենց հայրենիքն է համարում ներկայիս Սամցխե-Ջավախեթիի տարածքը և հանդես է գալիս այնտեղ վերադառնալու մտադրությամբ:⁶⁵

2008թ. նոյեմբերին Անկարայում հիմնվեց «Ահրսկա թուրքերի համաշխարհային միությունը» (DATÜB), որի նպատակն է տարբեր երկրներում բնակվող մեսխեթցի թուրքերի միավորումը և ընդհանուր

⁶³ Pentikäinen O., Trier T., նշվ. աշխ., p. 29.

⁶⁴ Տե՛ս նույն տեղում:

⁶⁵ Modebadze V., նշվ. աշխ., p. 122.

խնդիրների լուծումը:⁶⁶ Չնայած այն հանգամանքին, որ կազմակերպությունը վայելում է Թուրքիայի կառավարության աջակցությունը, այն իր արդյունավետությամբ աչքի չի ընկնում:

2006-2007թթ. Կրասնոդարի մարզից ԱՄՆ տեղափոխված մեսիսեթցի թուրքերը հիմնել են «Ահրսկա թուրք-ամերիկյան միություն»-ը, որը զբաղվում է նրանց ինտեգրմամբ և այլ խնդիրների կարգավորմամբ:⁶⁷ Ռուսական կողմն այդ կազմակերպության գործունեությունը դիտարկում է որպես ՌԴ դեմ ուղղված ոստնձգություն և 2015թ. այն ներառել է իր տարածքում արգելված կազմակերպությունների ցուցակում:⁶⁸

Այսպիսով, թեև մեսիսեթցի թուրքերն ունեն մեծ թվով կազմակերպություններ և միավորումներ, սակայն նրանց գործունեության արդյունավետությունը ցածր է, ինչը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Մեսիսեթցի թուրքերի միասնականությանը խոչնդոտող գործոններից է այն, որ նրանք սփռված են 9 երկրների տարածքներում: Կազմակերպություններից ոչ մեկը ներկայացված չէ այդ երկրներից գոնե մի քանիսում, ինչն էլ որևէ կազմակերպությանը հնարավորություն չի տալիս ստանձնել մեսիսեթցի թուրքերի շարժման առաջնորդությունը: Այս պարագայում էլք կարող է համարվել կազմակերպությունների համագործակցությունը, սակայն մի շարք հարցերի շուրջ նրանց մոտեցումների հակասությունը (օրինակ, մեսիսեթցի թուրքերի ծագման և հայրենիքի հարցը), թույլ չի տալիս համախմբվել ընդհանուր խնդիրների լուծման նպատակով: Բացասական դեր է կատարում նաև այն, որ մեսիսեթցի թուրքերի առավել խոշոր կազմակերպությունների դիրքորոշումները և նպատակները ավելի շատ քաղաքական բնույթի են և այդ էթնոկրոնական խմբի ներկայացուցիչների առօրյա կյանքում ունեցած բազմաթիվ խնդիրներն անտեսվում են: Այդ պատճառով կազմակերպությունները ժողովրդի կողմից լայն աջակցություն չեն ստանում, ինչն էլ սահմանափակում է նրանց հնարավորությունները:

⁶⁶ DATÜB - www.ahiska-gazeta.com/ru/pages/312.html (15.01.2019).

⁶⁷ **Бугай Н.Ф., Мамаев М.И.**, Международное общественное объединение турок-месхетинцев «Ватан» как институт власти гражданского общества, *Историческая и социально-образовательная мысль*, 2015, 7, 8, с. 25-26.

⁶⁸ **Мавашев Ю.**, նույն տեղում:

Մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի քննարկումները միջազգային կառույցներում

ԽՍՀՄ փլուզումից մինչ 1996թ. մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը միջազգային արձագանք չէր ստանում, քանի որ միջազգային հանրության ուշադրությունը կենտրոնացած էր նախկին Հարավ-արևմտյան և Խորհրդային Միության տարածքներում սկսված հակամարտությունների վրա: Միայն այդ հակամարտությունների ակտիվ փուլի ավարտից հետո մեսխեթցի թուրքերի հարցը սկսեց քննարկվել նաև միջազգային հարթակներում:

1996թ. մայիսին ԵԱՀԽ, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի և Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) միացյալ ջանքերով կազմակերպված «Փախստականների, տեղահանված անձանց, բռնի տեղահանության այլ ձևերի և վերադարձանների խնդիրներով ԱՊՀ երկրների և նրանց հարևան պետությունների տարածաշրջանային կոնֆերանս»-ի (հայտնի է նաև որպես «ԱՊՀ կոնֆերանս») հայտարարության մեջ ճանաչվում էր բռնի տեղահանված ժողովուրդների կամավոր վերադարձի իրավունքը:⁶⁹ Փաստորեն, այս փաստաթղթով միջազգային հանրությունը ճանաչում էր մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը, որը հիմք էր միջազգային մակարդակով հարցի բարձրացման համար: 1998թ. ՄՄԿ, Եվրոպական ազգությունների դաշնային միության (FUEN) և Human Rights Watch-ի զեկույցները միջազգային հանրության ուշադրությունը սևեռեցին հիմնախնդրի վրա:

1998թ. սեպտեմբերի 7-10-ը Հաազայում ԵԱՀԽ և ՄԱԿ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի նախաձեռնությամբ անցկացվեց մեսխեթցի թուրքերի հարցով խորհրդակցություն, որին ներկա էին Վրաստանի, Ռուսաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի, Ուկրաինայի, այդ երկրներում բնակվող

⁶⁹ Regional Conference to address the problems of refugees, displaced persons, other forms of involuntary displacement and returnees in the countries of the Commonwealth of Independent States and relevant neighbouring States (Geneva, 30-31 May, 1996) - <https://www.iom.int/jahia/webdav/shared/shared/mainsite/microsites/rcps/cis-conference/CIS%20Declaration%20POA%20Regional%20Conference%201996.pdf> (20.01.2019).

մեսիսթեթի թուրքերի և «Վաթան» կազմակերպության ներկայացուցիչները: Խորհրդակցության նպատակն էր հիմնախնդրի կարգավորմանն ուղղված հարցերի քննարկումը: Ընթացքում ի հայտ եկան բազմաթիվ վիճելի հարցեր, որոնցից մեկը վերաբերում էր մեսիսթեթի թուրքերի անվանմանը: Վրացական պատվիրակությունն առաջարկում էր կիրառել «մեսիսթեթ» կամ «Մեսիսթեթի արտաքսված բնակչություն» եզրույթները, որը մեսիսթեթի թուրքերի համար անընդունելի էր: Արդյունքում կողմերը համաձայնության եկան վերջնական փաստաթղթում օգտագործել «մեսիսթեթի թուրքեր» եզրույթը:⁷⁰

1999թ. մարտի 15-17-ին Վիեննայում անցակցվեց ևս մեկ խորհրդակցություն, որին ներկա էին նույն շահագրգիռ կողմերը: Այս անգամ քննարկման առարկա էին մեսիսթեթի թուրքերի հայրենադարձության պայմանները, Վրաստանի պարտականությունները, ինչպես նաև նրանց այդ պահին գտնվելու վայրում ունեցած կարգավիճակի հարցը: Քննարկումների արդյունքում Վրաստանը պարտավորվեց Եվրոպայի խորհրդին (ԵԽ) անդամակցությունից հետո երկու տարվա ընթացքում ստեղծել օրենսդրական բազա մեսիսթեթի թուրքերի վերադարձի համար և մինչ 2011թ. իրականացնել հայրենադարձությունը:⁷¹ Ինչ վերաբերում է ՌԴ Կրասնոդարի մարզում մեսիսթեթի թուրքերի իրավունքների խախտումների մասին քննարկումներին, ապա դրանք որևէ արդյունք չտվեցին: ՌԴ ներկայացուցիչը նույնիսկ շեշտեց, որ մեսիսթեթի թուրքերի խնդիրը սահմանափակվում է միայն նրանց՝ Վրաստան տեղափոխվելու պայմանների բացակայությամբ, իսկ ՌԴ-ում նրանք ժամանակավոր բնակիչներ են:⁷²

Հետագա տարիներին ԵԽ-ն ընդունեց մի շարք բանաձևեր, որոնք քննադատում էին Վրաստանի իշխանությունների վարած

⁷⁰ **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, նշվ. աշխ., pp. 37-38;

⁷¹ Georgia's application for membership of the Council of Europe - <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=16669&lang=en> (17.01.2019).

⁷² **Симоненко В.А.**, Месхетинские турки: историческая судьба и проблемы культурной адаптации, дис. канд. ист. наук., Краснодар, 2002., с. 133.

քաղաքականությունն ու պահանջում էին արագացնել ստանձնած պարտականությունների կատարումը:⁷³

Այսպիսով, 1996-1999թթ. ընթացքում մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի միջազգային կառույցների կողմից արձանագրումն ու դրա լուծման ուղղությամբ ձեռնարկված քայլերը կարևոր նշանակություն ունեցան հարցի կարգավորման հետևողական և կանոնակարգված մոտեցում ձևավորելու գործում:

Վրաստանի քաղաքականությունն ու հայրենադարձության գործընթացը

Դեռ Խորհրդային Միության փլուզմանը նախորդող տարիներին, չնայած պետությունը քաղաքականությունը նպաստավոր չէր դրա համար, սակայն մեսխեթցի թուրքերի մի մասը վերադարձել էր Վրաստան: Վրաստանի անկախացումից հետո երկրում ձևավորված ազգային անհանդուրժողության մթնոլորտի, ինչպես նաև ծանր սոցիալ-տնտեսական պայմանների պատճառով նրանց մեծ մասը լքեց երկիրը:⁷⁴

1992թ. Վրաստանում իշխանության փոփոխությունից հետո ստեղծվեց «Արտաքսված մեսխեթի հայրենադարձության կոմիտեն», որի անդամները Վրաստանի մարզի ներկայացուցիչների հետ բանակցություններից հետո մշակեցին «1944թ. Վրաստանի ԽՍՀ Մեսխեթիից և Ջավախեթիից արտաքսված բնակչության հայրենադարձության հայեցակարգային ծրագիրը»:⁷⁵ Այդ փաստաթուղթն ուներ հռչակագրային բնույթ, քանի որ նպատակների իրականացման կոնկրետ մեխանիզմներ չէր նախատեսում:

1993թ. Վրաստանի նախագահ Է. Շևարդնաձեի հրամանագրով Թբիլիսիում հիմնվեց «Վրացերենի և Վրաստանի պատմության

⁷³ Pentikäinen O., Trier T., նշվ. աշխ., pp. 37-38; Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., նշվ. աշխ., p. 41.

⁷⁴ Swerdlow S., Understanding Post-Soviet Ethnic Discrimination..., p. 1838;

Мамулия Г., նույն տեղում; Теймураз Ломсадзе: "80-85% месхетинцев – фактически этнические грузины" - <https://www.ekhokavkaza.com/a/25141402.html> (09.01.2019).

⁷⁵ Деловая Грузия. Экономика и связи с Россией в 1999-2001 гг., т. 1, Москва, 2002, с. 25.

ադապտացիոն կենտրոն»-ը, որտեղ երիտասարդ մեսիսեթցի թուրքերը կարող էին անհրաժեշտ պատրաստություն անցնել երկրի ԲՈՒՀ-եր ընդունվելու համար:⁷⁶ Հավանաբար այդ քայլով Վրաստանի իշխանությունները փորձում էին նպաստել մեսիսեթցի թուրքերի ազգային ինքնության փոփոխությանը՝ հոգուտ վրացական վարկածի:

1996թ. դեկտեմբերին Է. Շևարճյանի ստորագրեց «Արտաքս-ված և Վրաստան հայրենադարձված մեսիսեթցի իրավական և սոցիալական խնդիրների լուծման պետական ծրագրի հաստատման մասին» հրամանագիրը, որի նպատակն էր քաղաքացիության տրամադրումը, ազգության և ազգանվան վերականգնումը, գործող օրենսդրության հիման վրա տնտեսական արտոնությունների տրամադրումը, սոցիալական պաշտպանության ապահովումը, հասարակությանն ինտեգրվելուն աջակցությունը: Այդ նպատակներն իրականացնելու համար ստեղծվեց Պետական կոմիտե՝ Փախստականների գործերի և տարաբնակեցման նախարար Վ. Վաչակիձեի գլխավորությամբ: 1997-2000թթ. առաջին փուլում ենթադրվում էր, որ Վրաստան կվերադառնա 5000 մարդ:⁷⁷ Փաստորեն, հրամանագրի նպատակներից պարզ է դառնում, որ հայրենադարձության իրավունք էր տրվում միայն այն մարդկանց, որոնք իրենց համարում էին մահմեդականացած վրացիներ: Սակայն, նույնիսկ այդ պարագայում, հրամանագիրը որևէ արդյունք չտվեց: Ըստ էության, այն հայրենադարձության պատրանք էր ստեղծում:

1997թ. դեկտեմբերին ընդունված «Քաղաքական բռնաճնշումների զոհերի և արդարության վերականգնման մասին» օրենքը նույնպես շրջանցում էր մեսիսեթցի թուրքերի հարցը, քանի որ այն վերաբերում էր միայն Վրաստանի այն քաղաքացիներին, որոնք բռնաճնշումների են ենթարկվել հանրապետության տարածքում:⁷⁸

1999թ. ԵՄ անդամակցության ժամանակ մեսիսեթցի թուրքերի հայրենադարձության իրականացման պարտավորությունը ստանձնե-

⁷⁶ Мамулия Г., նույն տեղում:

⁷⁷ Տե՛ս նույն տեղում:

⁷⁸ საქართველოს კანონი საქართველოს მოქალაქეთა პოლიტიკური რეპრესიების მსხვერპლად აღიარებისა და რეპრესირებულთა სოციალური დაცვის შესახებ -

<https://matsne.gov.ge/ka/document/view/31408?publication=11> (09.01.2019).

լուց հետո Վրաստանի քաղաքականությունը մեսխեթի թուրքերի հիմնախնդրի լուծման հարցում էական փոփոխություններ չկրեց: Հետագա տարիների ընթացքում օրենսդրական բազայի ստեղծումը նախատեսվածից շատ ավելի դանդաղ էր ընթանում: ԵՄ-ին անդամակցելիս ստանձնած պարտավորությունից անմիջապես հետո մշակվեց մեսխեթի թուրքերի հայրենադարձության վերաբերյալ օրինագիծ, որը, սակայն, 7 տարի շարունակ, իշխանությունների խոստումներին հակառակ, չներառվեց խորհրդարանական քննարկումների օրակարգ:

Վրացական կողմն իր պասիվությունը բացատրում էր միջոցների անբավարարությամբ և Աբխազիայի ու Հարավային Օսիայի հակամարտությունների չկարգավորվածությամբ: Ելնելով դրանից, ակնկալվում էր եվրոպական կառույցների բազմակողմանի ֆինանսական աջակցություն:⁷⁹ Վրացի քաղաքական գործիչները նաև մտահոգություն էին հայտնում, որ մեսխեթի թուրքերի վերադարձը Մամգիսե-Ջավախեթի կարող է ապակայունացնել այդ շրջանը և, նույնիսկ, սպառնալ երկրի տարածքային ամբողջականությանը:⁸⁰

Որպես մեսխեթի թուրքերի վերադարձին խոչնդոտող հանգամանք վրացի քաղաքական գործիչներն ու հետազոտողները նշում են, որ մեսխեթի թուրքերի նախկին գյուղերի մի մասը զբաղեցրել են ջավախահայերը և այնտեղ մեսխեթի թուրքերի վերադարձը կարող է նոր հակամարտության պատճառ դառնալ: Որպես խոչընդոտ դիտարկում են նաև ջավախահայության բացասական վերաբերմունքն այդ գործընթացինկատմամբ:⁸¹ Սակայն, պետք է նշել, որ հայերը բնակվում են մեսխեթի թուրքերի 200-ից ավելի նախկին գյուղերից միայն մի քանիսում: Գյուղերի մոտ 2/3 մասը բնակեցված է էթնիկ վրացիներով, իսկ մնացած մասը լքված է:⁸² Բացի

⁷⁹ Деловая Грузия. Экономика и связи с Россией в 1999-2001гг., с. 26; ხაზინდრავა მავნადობი მესხეთის რეპატრაციის შესახებ საუბრობს - <https://old.civil.ge/geo/article.php?id=12432> (11.01.2019); **Շարադյան Ա.**, նշվ. աշխ., էջ 74:

⁸⁰ **Modebadze V.**, նշվ. աշխ., p. 125.

⁸¹ **Modebadze V.**, նշվ. աշխ., p. 122; **Оганесян А.**, նշվ. աշխ., էջ 173:

⁸² **Калишевский М.**, Турки-месхетинцы: из одного изгнания в другое, ч.2 - <https://www.fergananews.com/articles/6281> (11.01.2019).

այդ, Վրաստանի իշխանությունները մեսխեթցի թուրքերի Սամցխե-Ջավախեթի վերադառնալու հեռանկարն օգտագործում են որպես լրացուցիչ գործոն՝ տեղի հայության նկատմամբ ճնշում գործադրելու համար: Ջավախքի հայերը նույնիսկ իրենց դժգոհությունն դրսևորել Վրաստանի նման քաղաքականության դեմ:⁸³ Թեև Ջավախքի հայության համար անցանկալի է մեսխեթցի թուրքերի վերադարձը Սամցխե-Ջավախեթի, այնուամենայնիվ, նրանք հայրենադարձությանը դեմ չեն, եթե հայրենադարձները բնակեցվեն այն վայրերում, որտեղից արքայից են՝ այսինքն Սամցխեում (Ադիգենի, Ախալցխեի և Ասպինձայի շրջաններ):⁸⁴

Չնայած այս ամենին, պաշտոնական Թբիլիսին քաջ գիտակցում է, որ Թուրքիայի սահմանին թուրքական ինքնություն ունեցող սովոր բնակչությունը կարող է նոր անջատողական շարժում սկսել, կամ դրա առկայությունը պաշտոնական Անկարան ու Բաքուն կարող են որպես լրացուցիչ ճնշման լծակ օգտագործել Թբիլիսիի նկատմամբ: Ամենայն հավանականությամբ, հենց այդ պատճառով էլ վրացական կողմն ամեն կերպ փորձում է անուղղակիորեն խոչընդոտել մեսխեթցի թուրքերի՝ վերադարձն այդ տարածաշրջան:

2003թ. Վրաստանում տեղի ունեցած Վարդերի հեղափոխությունից հետո նոր կառավարությունից ակնկալվում էր մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի լուծման ավելի կառուցողական մոտեցում: Սկզբնական շրջանում այդ հույսերը կարծես թե արդարանում էին: 2005-2006թթ. ընթացքում ակտիվ քննարկումներից հետո 2007թ. հուլիսի 11-ին Վրաստանի խորհրդարանն ընդունեց «XX դարի 40-ական թվականներին ԽՍՀՄ կողմից Վրաստանի ԽՍՀ-ից բռնի արտաքսված անձանց հայրենադարձության մասին» օրենքը:⁸⁵ Նույն օրը Վրաստանի կառավարությունն ընդունեց «Հայրենադարձի կարգավիճակ ունեցող անձանց Վրաստանի քաղաքացիության շնորհման պարգևեցված ընթացակարգի մասին» որոշումը: Օրենքը թույլ

⁸³ Армяне Джавахети обвиняют власти Грузии в противоправных действиях - <https://www.kavkaz-uzel.eu/articles/78636/> (16.01.2019).

⁸⁴ Калишевский М., ს ი ლ ს თ ე ო ლ მ :

⁸⁵ ყოფილი სსრკ-ის მიერ XX საუკუნის 40-იან წლებში საქართველოს სსრ-იდან იძულებით გადასახლებულ პირთა რეპატრაციის შესახებ - <https://matsne.gov.ge/ru/document/view/22558?publication=7> (09.01.2019).

եր տալիս սկսել մեսխեթցի թուրքերի հայրենադարձության գործընթացը, որը պետք է մեկնարկեր 2008թ. և ավարտվեր 2011-ին:

Խորհրդարանի ընդունած հայրենադարձության մասին այդ օրենքն արժանացավ սուր քննադատության:⁸⁶ Օրենքը քննադատվում էր խիստ սահմանափակումների և հայրենադարձության հայտներկայացնելու բարդացված պահանջների համար: Բացի այդ, հայտերի ընդունմանը հատկացվում էր միայն մեկ տարի: Փաստաթղթերի ամբողջական փաթեթը ներառում էր շուրջ 14 տարբեր տեղեկանքներ, որոնց թվում՝ բռնի տեղահանումն ապացուցող փաստաթուղթ:⁸⁷ Նման հատուկ փաստաթուղթ արտաքսվածներին խորհրդային իշխանություններ չէին տրամադրում և հստակ չէ, թե որ փաստաթղթերը կարող են համարվել «բռնի տեղահանման ապացույց»: Դիմումը պետք է լրացվեր վրացերեն կամ անգլերեն, մինչդեռ մի քանի տասնյակ տարի Միջին Ասիայում բնակված մարդկանց մեծ մասը այդ լեզուներից որևէ մեկին չէր տիրապետում: Օրենքով չէր սահմանվում հայրենադարձի կարգավիճակը, ինչպես նաև չէին նախատեսվում ֆինանսական աջակցություն կամ արտոնություններ:

Թեև 2008թ. դեկտեմբերին Վրաստանի խորհրդարանը փաստաթղթերի ընդունման ժամկետը երկարաձգեց մինչև 2009թ. հուլիսի 1-ը, սակայն այն էական ազդեցություն չունեցավ հայրենադարձության գործընթացի վրա:

Վրացական կողմի հաղորդմամբ մինչ 2011թ. տարբեր երկրներում գտնվող Վրաստանի դեսպանատներում ստացվել է 5841 դիմում (մոտ 8900 անձ):⁸⁸ Նրանցից հայրենադարձի կարգավիճակ ստացել են մոտ 1700 մարդ, որոնք բնակեցվել են երկրի տարբեր շրջաններում:⁸⁹ Ռուսական, ադրբեջանական և հիմնախնդրով

⁸⁶ **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, նշվ. աշխ., p. 46; **Усманов А.О.**, և շ վ . աշ խ., է ջ 163; Теймураз Ломсадзе: "80-85% месхетинцев – фактически этнические грузины" - <https://www.ekhokavkaza.com/a/25141402.html> (09.01.2019).

⁸⁷ ყოფილი სსრკ-ის მიერ XX საუკუნის 40-იან წლებში საქართველოს სსრ-იდან იძულებით გადასახლებულ პირთა რეპატრაციის შესახებ (მუხ. 4.2.ს), <https://matsne.gov.ge/ru/document/view/22558?publication=7> (09.01.2019).

⁸⁸ **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, և շ վ . աշ խ., p. 44.

⁸⁹ Written statement on repatriation of Meskhethian Turks to Georgia, submitted by the NGO Federal Union of European Nationalities -

շահագրգիռ այլ երկրների մեծ մասի մամուլը, ինչպես նաև առանձին հետազոտողներ վրացական կողմի ներկայացրած թվերը կասկածելի էին համարում, նշելով, որ Վրաստան վերադառնալ ցանկացողների թիվն ավելի մեծ է և հայտերի սակավությունը բացատրում էին արհեստական բարդացված գործընթացով:⁹⁰ Վրաստանի իշխանությունները քննադատվեցին ստանձնած պարտականություններից խուսափելու համար նաև միջազգային կառույցներում:⁹¹

Թեև վերոնշյալից պարզ է, որ Վրաստանի իշխանությունները մեսխեթցի թուրքերի հայրենադարձության հարցում շահագրգռված չեն և լրացուցիչ խոչնդոտներ են առաջացնում այդ խնդրի լուծման համար, պետք է նշել, որ կան նաև մի շարք օբյեկտիվ հանգամանքներ, որոնք նույնպես բարդացնում են հայրենադարձության անցկացման գործընթացը: Այդ հանգամանքներից մեկը Սամցխե-Ջավախեթիի սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններն են: Միևնույն ժամանակ թուրքական երկրներում բնակվող մեսխեթցի թուրքերը բավականին լավ են ինտեգրված հասարակությունում: Թուրքիայում, Ղազախստանում, ԱՄՆ-ում, ինչպես նաև որոշ չափով Ռուսաստանում և Ադրբեջանում նորմալ պայմաններում բնակվող մեսխեթցի թուրքերից շատերը դժվար թե ցանկանան թողնել ունեցածը և տեղափոխվել Սամցխե: Բացի այդ, ներկայումս մեսխեթցի թուրքերի մեծ մասն արտաքսվածների սերունդներն են, որոնք երբեք չեն եղել

https://www.ecoi.net/en/file/local/1236549/1930_1443084042_g1520228.pdf

(12.01.2019); დეპორტიორებზელი მესხები: ფერგანამდე და უკან,

<http://www.tabula.ge/ge/story/54490-deportirebuli-mesxebi-ferganamde-daukan> (12.01.2019).

⁹⁰ **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, ს 2 վ . աշ խ., p. 44-45; Теймураз Ломсадзе: "80-85% месхетинцев – фактически этнические грузины" - <https://www.ekhokavkaza.com/a/25141402.html> (09.01.2019); Грузия отказалась возвращать турок-месхетинцев - <https://rg.ru/2014/04/08/turki-site.html> (11.01.2019).

⁹¹ Written statement on repatriation of Meskhethian Turks to Georgia, submitted by the NGO Federal Union of European Nationalities -

https://www.ecoi.net/en/file/local/1236549/1930_1443084042_g1520228.pdf

(12.01.2019); Council of Europe Parliamentary Assembly Resolution, "Honouring of Obligations and commitments by Georgia" -

http://assembly.coe.int/CommitteeDocs/2010/20100624_amondoc24rev_2010.pdf (12.01.2019).

Մամցիւեում և հոգեբանական կապվածությունն այդ տարածքի հետ այնքան էլ մեծ չէ:

Մեսիւեթցի թուրքերի Վրաստան վերադարձի նկատմամբ բացասական վերաբերմունք ունի նաև Վրաստանի բնակչությունը:⁹² 2009թ. Ախալցիխեում և շրջակա գյուղերում անցկացված հարցման արդյունքներով հարցվածների 87%-ը դեմ է արտահայտվել մեսիւեթցի թուրքերի վերադարձին:⁹³ Դա նշանակում է, որ Վրաստանում, մասնավորապես Մամցիւեում, մեսիւեթցի թուրքերի վերադարձն ընդունելի չէ նաև հասարակական կարծիքի մակարդակով:

Արտաքին ուժերի շահերը հիմնախնդրի լուծման հարցում

Մեսիւեթցի թուրքերի հիմնախնդիրը թեև Վրաստանի ներքին խնդիրներից է, միևնույն ժամանակ այն որոշակիորեն առնչվում է Վրաստանի հարևան երկրների աշխարհաքաղաքական շահերի հետ:

Մեսիւեթցի թուրքերի՝ Վրաստան վերադարձով, առավել շահագրգիռ երկրներն են Թուրքիան և Ադրբեջանը: Այդ մասին է վկայում նաև այն, որ հիմնախնդիրը միջազգային ատյանների ուշադրության կենտրոնում հայտնվել է հենց Թուրքիայի շնորհիվ: Հատկանշական է, որ մեսիւեթցի թուրքերի վերադարձի հարցը ԵԱՀԽ-ում բարձրացվեց Թուրքիայի և Լատվիայի պատգամավորների ջանքերով:⁹⁴ Լատվիան ուղղակի շահ չունի մեսիւեթցի թուրքերի վերադարձի հարցում: Բայց լատվիացիները շատ զգայուն են ստալինյան տարիներին տեղի ունեցած բռնաճնշումների նկատմամբ, քանի որ հազարավոր լատվիացիներ արքարվել էին երկրից: Բարձրացնելով հիմնախնդիրը միջազգային ատյաններում, Լատվիան ևս մեկ անգամ ցույց էր տալիս ԽՍՀՄ իշխանությունների ամբողջատիրական ռեժիմի անօրինականությունները: Թերևս

⁹² Теймураз Ломсадзе: "80-85% месхетинцев – фактически этнические грузины" - <https://www.ekhokavkaza.com/a/25141402.html> (09.01.2019).

⁹³ *Յուրթաթի Յ.*, նշվ. աշխ., ՅՅ. 181-182.

⁹⁴ Арис Казинян: Грузия и американо-турецкий проект по возвращению турок-месхетинцев: история и реальность - <https://regnum.ru/news/671851.html> (10.01.2019).

Թուրքիան կարող էր օգտագործել այդ տրամադրություններն իր քաղաքական շահերի օգտին:

Թուրքիայի աջակցությունը վայելում են մեսխեթցի թուրքերի այն կազմակերպությունները, որոնք արտահայտվում են Թուրքիա տեղափոխվելու օգտին կամ պահանջում են Վրաստանի իշխանություններից թույլ տալ իրենց վերադառնալ Սամցխե-Ջավախեթի:

Դեռ 1992թ. հունիսին Թուրքիայում ընդունվեց օրենք, որը հեշտացնում էր նախկին խորհրդային հանրապետություններից մեսխեթցի թուրքերի ներգաղթը: Թեև Թուրքիայի կառավարությունը պատրաստ էր ֆինանսավորել 500 ընտանիքի, այդ նախաձեռնությունը մեծ հաջողություն չունեցավ և 1993-1994թթ. ընթացքում Թուրքիա տեղափոխվեց միայն 179 ընտանիք, որոնց կեսը ստացան քաղաքացիություն:⁹⁵ Նրանց մեծ մասը բնակեցվեց Ժամանակակից Թուրքիայի արևելյան շրջաններում՝ պատմական Արևմտյան Հայաստանի տարածքում:

Հետագա տարիներին Անկարան շարունակեց ընդունել մեսխեթցի թուրքերին: Վերջին շրջանում Թուրքիա տեղափոխված մեսխեթցի թուրքերը գլխավորապես Ուկրաինայի հակամարտության գոտում գտնվող տարածքներից են, և նրանց նույնպես Թուրքիայի իշխանությունները փորձում են բնակեցնել արևելյան շրջաններում:⁹⁶ Այնուամենայնիվ, մեսխեթցի թուրքերից շատերն անտեսում են Թուրքիայի իշխանությունների քաղաքականությունը և բնակվում երկրի արևմտյան շրջաններում, կենտրոնանալով Բուրսա, Ստամբուլ և Անթալիա քաղաքներում: Թուրքիայում բնակվող մեսխեթցի թուրքերի թիվը գնահատվում է մոտ 35000:⁹⁷ Հաշվի առնելով XIX դարում և XX դարի առաջին կեսին Թուրքիա տեղափոխված մեսխեթցի թուրքերին,

⁹⁵ **Շաքարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 78:

⁹⁶ *Ukrayna'daki çatışmalardan kaçan Ahıska Türkleri Erzincan'a getirildi* - <https://tr.euronews.com/2015/12/26/ukrayna-daki-catismalardan-kaçan-ahıska-türkleri-erzincan-a-getirildi> (24.01.2019); *Ukrayna'dan Van Gölü kıyısına: Yeni Ahıska Ahlat* - <http://www.hurriyet.com.tr/gundem/ukraynadan-van-golu-kiyisina-yeni-ahıska-ahlat-40116688> (24.01.2019).

⁹⁷ **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, նշվ. աշխ., p. 55.

նրանց թիվը շատ ավելի մեծ է, սակայն վաղ շրջանում տեղափոխվածների մեծ մասն արդեն տարալուծվել է:

Թեև Թուրքիան ընդունում է մեսիսեթցի թուրքերին, սակայն նրա համար կարևոր է նաև Սամցխեում մեսիսեթցի թուրքերի ստվար բնակչություն ունենալ: Թուրքիան ակտիվ մասնակցություն է ունեցել միջազգային ասոյաններում հիմնախնդրի քննարկումներին, ինչպես նաև բազմիցս բարձրացրել է այդ հարցը Վրաստանի հետ հարաբերություններում՝ ԵԱՀԽ հետ ճնշում գործադրելով Վրաստանի իշխանությունների վրա:⁹⁸

Թուրքիան Վրաստանը և հատկապես Սամցխե-Չավախեթին դիտարկում է որպես իր համար ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներ: Թուրքիան ձգտում է մրցակցել տարածաշրջանում աշխարհաքաղաքական շահեր հետապնդող Ռուսաստանի հետ և այդ հարցում ավելի է աճում Սամցխե-Չավախեթիի նշանակությունը: Սամցխե-Չավախեթին կարևորվում է ինչպես տնտեսության ու էներգետիկ անվտանգության տեսանկյունից, այնպես էլ՝ քաղաքականության: Այս տարածքով են անցնում Թուրքիայի և Ադրբեջանի համար կարևոր նշանակություն ունեցող նավթատար և գազատար խողովակաշարերը, ինչպես նաև Թուրքիան Ադրբեջանի և միջինասիական պետությունների հետ կապող տարանցիկ ճանապարհներն ու երկաթուղին: Միևնույն ժամանակ, այդ երթուղու վրա Սամցխե-Չավախեթին միակ շրջանն է, որտեղ չկա մեծաթիվ թյուրքալեզու բնակչություն և, փաստորեն, տարանջատում է թուրքերին ադրբեջանցիներից: Բացի այդ, պաշտոնական Անկարան և Բաքուն Սամցխե-Չավախեթի մեսիսեթցի թուրքերի վերադարձի դեպքում, կարող են Հայաստանի շրջափակումն ավելի արդյունավետ կազմակերպել և ավելի մեծ ճնշում գործադրել Հայաստանի նկատմամբ՝ Արցախի հիմնախնդիրն իրենց օգտին լուծելու համար:⁹⁹ Ըստ էության, Թուրքիայի և Ադրբեջանի շահերը մեսիսեթցի թուրքերի Վրաստան վերադարձնելու հարցում համընկնում են: Չպետք է նաև մոռանալ, որ Վրաստանի սահմանամերձ շրջաններում մեծաթիվ

⁹⁸ Арис Казинян: Грузия и американо-турецкий проект по возвращению турок-мехетинцев: история и реальность - <https://regnum.ru/news/671851.html> (10.01.2019).

⁹⁹ Kurt S., նշվ. աշխ., s. 208-212.

թուրքական համայնքը շատ հարցերում կունենա թուրքամետ դիրքորոշում, ինչն էլ թույլ կտա Թուրքիային լրացուցիչ լծակներ ստանալ և անհրաժեշտության դեպքում ճնշում գործադրել Վրաստանի իշխանությունների նկատմամբ՝ ի աջակցություն տարածաշրջանում թուրքական քաղաքականության:

Ադրբեջանը մեսխեթցի թուրքերին իր հակահայկական քաղաքականության մեջ փորձեց օգտագործել դեռ 1990-ական թվականների սկզբին, երբ Ֆերգանայի դեպքերից հետո Ադրբեջան եկած փախստականների մի մասին փորձեց բնակեցնել ԼՂԻՄ տարածքում՝ ձգտելով փոխել մարզի էթնիկ կազմը:¹⁰⁰

Ադրբեջանում բնակվող մեսխեթցի թուրքերի ընդհանուր թիվը մոտ 70-100 հազար է:¹⁰¹ Ադրբեջանի շահագրգռվածությունը մեսխեթցի թուրքերի հայրենդարձության հարցում երևում է նաև այն փաստից, որ այդ նպատակով Վրաստանի դեսպանատներում ստացած հայրենադարձի կարգավիճակ ստանալու նպատակաով 5841 դիմումներից 5389-ը միայն Ադրբեջանից էին:¹⁰² Հաշվի առնելով դիմումների ներկայացման գործում առկա բարդությունները, ակնհայտ է դառնում, որ Ադրբեջանում բնակվող մեսխեթցի թուրքերին դիմումների ներկայացման գործում ուղորդել են և աջակցել, ինչը կարող էին անել Ադրբեջանի իշխանությունները:

Ադրբեջանի և Թուրքիայի շահերը մեսխեթցի թուրքերին Սամցխե-Ջավախեթիում բնակեցնելու ուղղությամբ հակասում են Հայաստանի և Արցախի շահերին և ուղղակիորեն սպառնում նրանց անվտանգությանը: Թեև պաշտոնական Երևանը մեսխեթցի թուրքերի հայրենադարձության դեմ հանդես չի գալիս, այդուհանդերձ մտահոգված է այս հարցով: Սամցխե-Ջավախեթին Հայաստանի համար նույնպես ռազմավարական նշանակություն ունի, քանի որ այն Հայաստանին հարակից միակ շրջանն է, որտեղ չկա թյուրքալեզու

¹⁰⁰ Карабахские депутаты: Ходжалу стал жертвой политических интриг и борьбы за власть в Азербайджане - <https://regnum.ru/news/962004.html> (25.01.2019); Арис Казинян: Грузия и американо-турецкий проект по возвращению турок-месхетинцев: история и реальность - <https://regnum.ru/news/671851.html> (10.01.2019).

¹⁰¹ **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, նշվ. աշխ., p. 55.

¹⁰² **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, նշվ. աշխ., p. 44.

բնակչություն և հանդիսանում է միակ ապահով ուղղին դեպի Եվրոպա և Ռուսաստան: Եթե այնտեղ վերադառնան մեսխեթցի թուրքերը, ապա Հայաստանը կհայտնվի լիակատար թուրք-ադրբեջանական օղակի մեջ, ինչն անկասկած կօգտագործվի Հայաստանի դեմ ռազմական գործողությունների վերսկսման դեպքում: Դրա վառ օրինակը 1990-ական թթ. մեծաթիվ ադրբեջանական բնակչություն ունեցող Մարնեուլիի շրջանում Ռուսաստանից Հայաստան մուտք գործող միակ զազատարի պարբերական պայթեցումներն են: Բացի այդ, մեսխեթցի թուրքերի Սամցխե-Ջավախեթի վերադարձը կարող է ուղեկցվել շրջանի հայաթափմամբ կամ առաջացնել լարված հարաբերություններ շրջանի հայերի և վրացիների հետ: Այս պարագայում ևս գոյություն ունի պատմական նախադեպ, երբ 1918թ. Սամցխեի մահմեդական բնակչությունը քրիստոնյա հայերի և վրացիների դեմ հանդես եկավ:¹⁰³

Մեսխեթցի թուրքերի հիմնախնդրով հետաքրքրված է նաև Ռուսաստանի Դաշնությունը: Այտեղ բնակվող մեսխեթցի թուրքերի թիվը գնահատվում է մոտ 75-100 հազար մարդ, որոնք բնակվում են գլխավորապես Հյուսիսային Կովկասում և մասամբ կենտրոնական շրջաններում:¹⁰⁴ Ընդհանուր առմամբ, Ռուսաստանի իշխանությունները մեսխեթցի թուրքերին համարում են ժամանակավոր բնակիչներ, իսկ Կրասնոդարի երկրամասում հաստատվածների նկատմամբ տեղի իշխանություններն ունեն խտրական վերաբերմունք:¹⁰⁵ Միևնույն ժամանակ, ՌԴ ներկայացուցիչները հանդես գալով մեսխեթցի թուրքերի՝ Վրաստան վերադարձի օգտին, փորձում են ճնշում գործադրել Վրաստանի իշխանությունների նկատմամբ: Այդ ճնշումն զգալիորեն մեծացավ 2008թ. օգոստոսյան պատերազմից հետո: 2008թ. հոկտեմբերին ՌԴ Պետական Դումայի ընդունած հայտարարությունում քննադատվեց մեկ տարի առաջ Վրաստանում ընդունված

¹⁰³ **Մերոնյան Ա.**, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, «Ջանգալ-97», Երևան, 2003, էջ 272-285; **Маилян М.**, Между Грузией и Турцией: особенности ирредентизма на примере Аджарии и Самцхе-Месхетии (1918-1921 гг.), Историческое пространство. Проблемы истории стран СНГ, Москва, 2015, с. 137-142.

¹⁰⁴ **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, նշվ. աշխ., p. 55; **Ахметьева В., Карастелев В., Юдина Н.**, և շ վ. աշխ., с. 6.

¹⁰⁵ **Swerdlow S.**, Understanding Post-Soviet Ethnic Discrimination..., pp. 1838-1849.

մեսխեթցի թուրքերի հայրենադարձության մասին օրենքը և ՌԴ պատգամավորները կոչ արեցին ԵԱՀԿ-ին ու միջազգային հանրությանը ճնշում գործադրել Վրաստանի վրա:¹⁰⁶ ՌԴ նման դիրքորոշման նպատակը կարող է լինել Վրաստանում ներքին քաղաքական վիճակի ապակայունացման ձգտումը, լարվածություն առաջացնելով մեսխեթցի թուրքերի հավաք բնակության վայրերում, սակայնհարկ է նկատել, որ մեսխեթցի թուրքերի վերադարձը տարածաշրջանում կամրապնդի Թուրքիայի և ՆԱՏՕ-ի դիրքերը, ինչը ցանկալի չէ Ռուսաստանի համար:

Եզրակացություն

Այսպիսով, մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի բազմակողմանի ուսումնասիրությունն ու վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն բազմաշերտ է և իր մեջ ներառում է մի շարք կարևոր բաղադրիչներ՝ մեսխեթցի թուրքերի ազգային ինքնությունը պարզելու և այն պահպանելու, ուժացման վտանգից խուսափելու, հայրենադարձության, ինչպես նաև ներկա բնակության վայրերում հասարակությանն ինտեգրվելու, սոցիալ-տնտեսական և իրավական բնույթի խնդիրները լուծելու հարցերը: Առկա է նաև տարածա-շրջանում աշխարհաքաղաքական մրցակցության ազդեցությունը հնարավոր զարգացումների վրա: Հիմնախնդրի առաջացման ելակետ է դարձել ԽՍՀՄ իշխանությունների կողմից Վրաստանի հարավում բնակվող մեսխեթցի թուրքերի արտաքսումը: ԽՍՀՄ իշխանությունները խնդրի իրավական կողմը ճանաչեցին միայն 1989թ. Ֆերգանայի դեպքերից հետո, իսկ միջազգային հարթակներում այն քննարկվեց միայն 1996-1999թթ.: Միջազգային աստիճանների կողմից հիմնախնդրի գոյության արձանագրմանը հետևեց կարգավորման փորձը: Այն ներառում է 1999-2011թթ. ընկած ժամանակահատվածը, որի ընթացքում խնդրին դրական լուծում չտրվեց և, որպես հետևանք, այն մինչ այժմ մնում է միջազգային դիվանագիտության և ազգամիջյանն փոխհարաբերությունների օրակարգում:

¹⁰⁶ ГД призвала надавить на Грузию в вопросе репатриации турок-месхетинцев - <https://ria.ru/20081017/153397643.html> (17.01.2019).

Հիմնախնդրի լուծման նպատակով ստեղծված մեսիսեթցի թուրքերի կազմակերպություններից ոչ մեկը բավարար ազդեցություն և միջոցներ չունի շարժումը գլխավորելու համար: Նրանք միասնական չեն նաև իրենց ընդհանուր նպատակին հասնելու հարցում, ինչն այդ կազմակերպությունների ընդգծված քաղաքականացվածության, և հակասող շահեր ունեցող երկրների՝ Վրաստանի կամ Թուրքիայի աջակցությունը վայելելու հետևանքն է:

Մեսիսեթցի թուրքերի հիմնախնդրի լուծումը Վրաստանին պարտադրվում է արտաքին ուժերի՝ գլխավորապես Թուրքիայի կողմից: Թեև Վրաստանը կարող է մեսիսեթցի թուրքերին Սամցխե-Ջավախեթիում բնակեցնելով փոխել մարզի ժողովրդագրական պատկերը և թուլացնել հայկական բնակչության դերակատարությունը, սակայն գործնականում փորձում է խուսափել նրանց Թուրքիայի հետ սահմանին մոտ բնակեցնելուց: Վրաստանը դրանով փորձում է չափավորել ջավախահայության սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման և մշակութային ինքնավարության պահանջը: Վրաստանը պատրաստ է ընդունել միայն այն մեսիսեթցի թուրքերին, որոնք ընդունում են իրենց վրացական ծագումը և տեղաբաշխում է տարբեր շրջաններում: Թբիլիսիում խուսափում են երկրում Թուրքիայի ազդեցության աճից:

Թուրքիան և Ադրբեջանը մեսիսեթցի թուրքերի հիմնախնդիրն օրգտագործում են իրենց աշխարհաքաղաքական շահերին ծառայեցնելու համար: Մեսիսեթցի թուրքերին Սամցխե-Ջավախեթիում վերաբնակեցնելով Թուրքիան տարածաշրջանում իր գերիշխանությունն ամրապնդելու հարցում զգալի առավելություն կստանա: Ադրբեջանին այդ հարցը գերազանցապես հակահայկական քաղաքականության համատեքստում է հետաքրքրում: Բաքվում հույս ունեն այդ կերպ Հայաստանի թուրք-ադրբեջանական շրջափակումը դարձնել լիակատար և օգտագործել այդ հանգամանքը՝ Արցախի հիմնախնդրի իրենց համար բարենպաստ լուծում ապահովելու նպատակով:

Ռուսաստանը նույնպես մեսիսեթցի թուրքերի գործոնը կիրառում է Վրաստանի նկատմամբ ճնշում գործադրելու համար: Միևնույն ժամանակ, նրա աշխարհաքաղաքական շահերը հակասում

են Թուրքիայի աշխարհաքաղաքական շահերին: Կարելի ենթադրել, որ հիմնախնդրի սրման պարագայում Ռուսաստանի դիրքորոշումը գլխավորապես կապված կլինի այդ պահին Վրաստանի և Թուրքիայի հետ ունեցած փոխհարաբերությունների բնույթից:

Հայաստանի համար մեսիսեթցի թուրքերի վերադարձը Սամցխե-Ջավախեթի կարող է լուրջ սպառնալիք լինել երկրի անվտանգության տեսակետից: Միաժամանակ, մեսիսեթցի թուրքերի հարցում Հայաստանի և Վրաստանի շահերը հիմնականում համընկնում են, ինչը կարող է լինել ևս մեկ քաղաքական հարթակ, որի միջոցով հնարավոր կլինի էլ ավելի ամրապնդել հայ-վրացական համագործակցությունը և դիմագրավել տարածաշրջանում թուրքադրբեջանական ազդեցության աճին:

The issue of the Meskhetian Turks at the crossroads of interests of Georgia and its neighbouring countries

KARO GALOYAN

The Institute of Orietal Studies NAS RA

The article makes a multilateral study of the issue of the Meskhetian Turks. It analyzes the emergence of the issue, the movement of the Meskhetian Turks, the positions of the organizations and their effectiveness. The study reveals many-sided problems, including the issues of addressing preservation of their identity, alienation, repatriation, integration into society in their current residence, as well as socio-economic and legal problems. The analysis of the Georgian policy and of the interests of its neighbor countries in this matter enables us to conclude that the issue poses a certain danger for Armenia. In order to prevent it, the verges of cooperation with Georgia are presented within the framework of the subject matter.